

Մ. ՌՈԶԵՆՏԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊՆ
ՈՒ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱԽՈՒՄԸ

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

[illegible]

Մ. ՌՈԶԵՆՏԱԼ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԿԱՊՆ ՈՒ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱԽՈՒՄԸ

Դասախոսություն՝ կարդացված Համ Կ(բ)Պ Կենտկոմին կից
Բարձրագույն պարտիական դպրոցում
1940 թ. հունվարի 14-ին



A $\frac{\text{II}}{5306}$

М. РОЗЕНТАЛЬ
**ВСЕОБЩАЯ СВЯЗЬ
И ВЗАИМОЗАВИСИМОСТЬ ЯВЛЕНИЙ
В ПРИРОДЕ И ОБЩЕСТВЕ**
(На армянском языке)

Государственное издательство политической литературы
Ереван • 1941

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները—Մարքսն ու Էնգելսը, Լենինն ու Ստալինը բարձր են գնահատում ուսուցիչական մատերիալիստական դիալեկտիկայի և նրա դերի նշանակությունը սոցիալիզմի հաղթանակի համար բանվոր դասակարգի միջած պայքարում: Լենինն ու Ստալինը, խոսելով մատերիալիստական դիալեկտիկայի մասին, միշտ ընդգծում են, որ դիալեկտիկան «մարքսիզմի հոգին» է, վճռողականը մարքսիզմի մեջ, որ մատերիալիստական դիալեկտիկան հանդես է գալիս որպես մարքսիզմի, մարքսիստական-լենինյան դիալեկտիկան արմատական թեորիական հիմքը:

Ո՞րն է այդ դիալեկտիկան ուժը: Ի՞նչպիսի հատկություններ, ի՞նչպիսի առանձնահատկություններ են տալիս նրան այդպիսի նշանակություն, նրան դարձնում այդպիսի մեծ ուժ մարդկային հասարակության զարգացման մեջ, բանվոր դասակարգի ուսուցիչական պայքարի զարգացման մեջ: Եթե համառոտակի ձևակերպենք մատերիալիստական դիալեկտիկայի իմաստը, նրա նշանակությունը, ապա պետք է ասել, որ մատերիալիստական դիալեկտիկան արտացոլում է բուն իսկ իրականության օբյեկտիվ օրենքների ուսուցիչական, պրոգնոստիկ բնույթը, փոքրիկից համախոսեցնող ուսուցիչական, որ կատարվում է բնության և մարդկային հասարակության մեջ: Ուսուցիչական դիալեկտիկան ցույց է տալիս, թե ինչպես և ինչի զորության մեջ է տեղի ունենում այդ նորոգումը, իրականության փոփոխման այդ համախոսեցնողական պրոցեսը: Եվ հենց սրա շնորհիվ է ուսուցիչական մարքսիստական դիալեկտիկան ծառայում իբրև ղեկավարություն աշխարհի պրակտիկ փոփոխման համար պայքարելիս:

Ի՞նչ բան է մատերիալիստական դիալեկտիկան իբրև

գլխավորութիւն: Էնդելսը գրում էր, որ մատերիալիստական գիտելիտիկան գլխավորութիւն է բնութեան, մարդկային հասարակութեան և մտածողութեան մեջ տեղի ունեցող զարգացման ամենից ավելի ընդհանուր օրենքների մասին: Այդ որոշման մեջ մենք հանդիպում ենք օրենքի հասկացողութեան: Իսկ ի՞նչ բան է օրենքը: Դուք գիտե՞ք, որ իրականութիւնը միշտ հանդես է գալիս մեր առջև մի տեսակ կրկնակի պլանով: Մենք տեսնում ենք այն, ինչ գտնվում է երևույթների մակերևութում, այն, ինչ մեզ անմիջականորեն է տրված, այն, ինչ մենք զգալով ենք մեր օրգաններով կարող ենք անմիջականորեն տեսնել, լսել, շոշափել: Բայց այն գիտելիքը, որ ձեռք է բերված զգացողութիւնների միջոցով, դեռ իրականութեան խորն իմացութիւնն է: Սա միայն առաջին աստիճանն է իմացութեան պրոցեսում: Լենինն իր «Փիլիսոփայական տետրակներում», կոնսպեկտելով Հեգելի «Լոգիկայի գլխավորութիւնը», գրում է, որ իմացութեան գիտելիտիկական պրոցեսը գնում է իրականութեան կենդանի հայեցողութիւնից դեպի արատրակտ մտածողութիւնը և արատրակտ մտածողութիւնից դեպի պրակտիկայի ուղիով ձեռք բերված ճշմարտութիւնների ստուգումը: Իմացութիւնը չի կարող կանգ առնել իրականութեան կենդանի հայեցողութեան վրա, որովհետեւ նա տալիս է գլխավորապես միայն պատկերացում եղակի իրերի, եղակի երևույթների մասին:

Գիտական իմացութիւնը չի կարող սահմանափակվել նրանով, որ նա ճանաչում է առանձին, եղակի երևույթները: Ամեն մի գիտական իմացութիւն, իմացութիւն է այն բանի, թե ինչն է հանդիսանում գլխավորը, հիմնականը, վճռողականը երևույթների մասսայում: Բայց այդպիսի իմացութիւն կենդանի հայեցողութիւնն ինքնըստինքյան չի կարող տալ, և նրան օգնութեան է գալիս արատրակտ մտածողութեան ուժը, խոհականութեան ուժը, մարդկային բանականութեան ուժը:

Իսկ ո՞րն է արատրակտ մտածողութեան նշանակութիւնը: Իմացութեան զարգացման այս երկրորդ աստիճանի նշանակութիւնն այն է, որ թերիական մտածողութիւնը,

Հիմնաւելով մի մատերիալի վրա, ինչ մեղ տրամադւորում է զգայական փորձը, իրականութեան կենդանի հայեցողութիւնը, ընդհանրացնում է իրականութեան երևույթները: Այս աստիճանի վրա իմացութիւնը դորձ ունի երևույթների մասսայի հետ: Գիտական իմացութիւնը դեն է գցում անընդուն հատկանիշները, որ հատուկ են այս կամ այն երևույթին, և վերցնում է բոլոր երևույթների մեջ ընդհանուրը, հաստատունը, վերցնում է այն, առանց ինչի ոչ մի երևույթ չի կարող գոյութիւն ունենալ, և, այսպիսով, բաց է անում արմատականը, կարևորը, վճռողական իրականութեան երևույթներում: Այդ արմատականը, կարևորը, վճռողականը երևույթներում և է՝ երևույթների գոյութեան, զարգացման օրէնքը:

Լենինն ասում է, որ արդեն իրականութեան փոքրագույն ընդհանրացումը մի քայլ է դեպի առաջ իմացութեան մեջ, մեր իմացութեան զարգացումն է: Այդ պատճառով յուրաքանչյուր իսկական գիտութիւն սկսվում է աշխտեղ, որտեղ չեն սահմանափակվում զգայական փորձով, կենդանի հայեցողութեամբ, որտեղ իրականութեան կենդանի հայեցողութիւնից անցնում են իրականութեան օրենքների իմացութեանը: Այս պատճառով ամեն մի գիտութիւն օրենքների գիտութիւն է:

Մատերիալիստական դիալեկտիկան, որպէս փիլիսոփայական գիտութիւն, նույնպէս օրենքների գիտութիւն է: Բայց գոյութիւն ունի կարևոր տարբերութիւն մատերիալիստական դիալեկտիկայի, ինչպէս օրենքների գիտութեան և յուրաքանչյուր ուրիշ գիտութեան միջև, որ նույնպէս բաց է անում իրականութեան օրենքները: Ո՞րն է այդ տարբերութիւնը: Այն է, որ դիալեկտիկան, ինչպէս ասում է Էնգելսը, գիտութիւն է իրականութեան ամենից ավելի ընդհանուր օրենքների: Դիալեկտիկայի կողմից բացվող օրենքների բնույթի մեջ էլ հենց թաքնվում է այն նշանակութեան դադանիքը, որ ունի մատերիալիստական դիալեկտիկան թեորիայի համար, մարդկային ամբողջ ունեւորի տն պրակտիկայի համար:

Ի՞նչ է նշանակում գիտություն իրականության զարգացման ամենից ավելի ընդհանուր օրենքների մասին: Դա նշանակում է, որ եթե այս կամ այն գիտությունը բաց է անում միայն այս կամ այն կոնկրետ երևույթներին հատուկ օրենքներ, ապա մատերիալիստական դիալեկտիկան բաց է անում իրականության բոլոր երևույթներին հատուկ օրենքներ: Հեշտ է հասկանալը, որ հենց մատերիալիստական դիալեկտիկայի օրենքների այս ընդհանուր բնույթն է նրան դարձնում մեթոդոլոգիա, մեթոդ, արմատական թեորիական հիմք, առանց որի չի կարող առաջ դնալ ոչ մի գիտություն, ոչ մի գիտակցական ուսուցիչ զործունեություն: Ամենից ավելի ընդհանուր օրենքներ գիտենալն օգնում է ճշտությամբ կողմնորոշվելու իրականության մեջ: Այդ օրենքները դիտենալը տալիս է ղեկավարող թել, որից բռնելով մենք կարող ենք ճշտությամբ ճանաչել, ճշտությամբ հասկանալ իրողարձությունների կապը, տեսնել, թե ղեկի ո՞ւր են նրանք զարգանում, նախատեսել մարդկային պատմության ընթացքը: Լենինն ասում էր, որ դիալեկտիկական օրենքները, հասկացողությունները, կատեգորիաները մեր խմացության, մեր պրակտիկայի հանգուցային, հենարանային կետերն են, այսինքն, այլ կերպ առած, հենվելով այդ օրենքները գիտենալու վրա՝ մենք գործում ենք բուն իսկ պատմության զարգացմանը համապատասխան:

Մատերիալիստական դիալեկտիկան աճեց մետաֆիզիկ մեթոդի, մետաֆիզիկ աշխարհայացքի դեմ պայքարելով: Դիալեկտիկան հանդիսանում է մետաֆիզիկ մեթոդի արմատական հակադրությունը:

Մետաֆիզիկան, որպես իրականության երևույթներին մոտենալու եղանակ, ծագել է մոտավորապես XV դարի կեսերին և երեքից ավելի դարի ընթացքում եղել է տիրապետող մեթոդ գիտության մեջ: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները բազմիցս նախադրուշացրել են, որ չի կարելի դռնակորեն, կոպտորեն, պրիմիտիվորեն հասկանալ մետաֆիզիկ մեթոդը, կարծել, թե նրա ծագումը կապված է ինչ-որ պատահականությունների հետ, թե նա ինչ-որ պատմական թյու-

Բիմացություն է: Իրականում՝ մետաֆիզիկ մեթոդի ծագումը պայմանավորվում էր որոշակի պատճառներով, ուներ իր որոշակի պատմական արմատները: Այդ պատճառները հասկանալու համար պետք է դիմել այն զուգահեռին, որ կա սրատմական իմացության ընթացքի և լոգիկական ինդուկցիոնալ իմացության ընթացքի միջև, իմացության ընթացքի միջև այնպես, ինչպես այդ իմացությունը կատարվում էր պատմության պրոցեսում և ինչպես նա կատարվում է առանձին մարդու, առանձին դիալեկտիկի գլխում:

Պատկերացրեք, որ ձեր առջև որևէ անձանոթ երևույթ է, ասենք, որևէ բարդ անձանոթ մեքենա, որը դուք պետք է ճանաչեք, որպեսզի նրան դործի պահեք: Ամեն մեկի համար պարզ է, որ այդ մեքենայից դործնականապես օգտվելու համար պետք է դիտենալ նրա առանձին մասերը, պետք է սկզբից նրան դասավորել ըստ առանձին դետալների և նրանց ճանաչել առանձին-առանձին: Եվ միայն հետո, ճանաչելով յուրաքանչյուր մասը, յուրաքանչյուր դետալն առանձին, դուք, ամբողջ մեքենան հավաքելով և նրա դետալները դիտենալու հիման վրա կարող եք ասել՝ ես այժմ դիտեմ, թե ինչպես օգտվել այս մեքենայից: Առանց մեքենան այսպես սկզբնական մասերի բաժանելու և յուրաքանչյուր մասը ջոկ-ջոկ ճանաչելու դուք չեք կարող ասել, թե դիտեք մեքենան: Ինչ-որ նման բան էր տեղի ունենում նաև մարդկային իմացության պատմության մեջ: Մարդկության առջև հսկայական, բարդագույն մի երևույթ էր՝ բնությունը, իրականությունը, որը պետք էր ճանաչել, ուսումնասիրել, հետազոտել: Եվ նման այն բանին, ինչպես առանձին մարդը, ճանաչելով այս կամ այն առանձին երևույթը՝ սկզբից դասավորում է նրան առանձին մասերի, սրա նման նաև մարդկությունը պատմական իմացության ընթացքում պետք է սկզբից անցներ բնությունը մասերի բաժանելու և յուրաքանչյուր մասի ջոկ-ջոկ անալիզի աստիճանը: Առանց սրան չէին լինի այն հաջողությունները, որ ունի իմացությունն այժմ, առանց դրա անհնարին էր մատերիալիստական դիալեկտիկան, մարքսիզմ-լենինիզմի առաջավոր աշխարհայացքը:

Տատալորապէս մինչև XVIII դարի վերջը գիտութեան մեջ շարունակվում էր մատերիալի կոտակումը, բնութեան մասերի, առանձին կողմերի անալիզը:

Բայց երբ ուսումնասիրվում են առանձին երևույթներն ինքնուրուիքայն, նրանք սկզբնապէս պոկվում են ընդհանուր կապից, դիտվում են ոչ թե նրանց փոփոխութեան և դարգացման մեջ, այլ ստատիկորեն, ունիվերսալ կապերից դուրս, որոնց մեջ նրանք դրնւմ են այլ երևույթներէ հետ, այլ առարկաների հետ:

Իրականութեանը մոտենալու այդ եղանակը սովորութեան ստեղծեց, ինչպէս ասում է Էնդելսը, մոտենալու երևույթներին մետաֆիզիկորեն, այսինքն, մի երևույթի և մյուսի կապից դուրս, նրանց զարգացումից և փոփոխութեանից դուրս, այն պայքարից և փոխադրեցութեանից դուրս, որ կա ռեալ, օբյեկտիւ աշխարհում: Փիլիսոփաներն այդ միակողմանի մոտեցումը փոխադրեցին փիլիսոփայութեան մեջ և հիմնավորեցին մետաֆիզիկ մեթոդը: Սրանք են մետաֆիզիկ մեթոդի ծագման պատճառները:

Մետաֆիզիկ մեթոդը, հետեւաբար, բնութեանը մոտենալու այնպիսի եղանակ է, որը դրնում է, որ բնութեան մեջ տիրում է երևույթների հանգստութեան, հալսասարակչութեան, անփոփոխութեան, մի եղանակ, որը բացասում է առարկաների ընդհանուր կապը և փոխադարձ կախումը, չի տեսնում, որ բնութեան մեջ տեղի է ունենում նորոգման և դարգացման հալխտենական պրոցես:

Բայց եթե իր ժամանակին միակողմանի այն մոտեցումը բնութեանը, որ զարգացալ հետադաշում և դարձալ մետաֆիզիկ մեթոդ, ուներ պատմական արդարացում, որովհետեւ նրան կշանքի կոչեցին գիտութեան զարգացման պահանջմունքները, ապա հետո, երբ գիտութեանը, բնագիտութեան առաջին հերթին, իսկ այնուհետեւ նաեւ հասարակական գիտութեանները, կարողացալ ցույց տալ բոլոր երևույթների սերտ կապը, կարողացալ ներկայացնել նրանց փոխադարձ պայքարում, հինը նորով փոխարինելու պրոցեսում, այսինքն, երբ արդեն ստեղծվեցին պայմաններ նոր

քայլի համար գիտութեան զարգացման մեջ, նոր, առաջա-
վոր աշխարհայացքի զարգացման համար,—մետաֆիզիկ մե-
թոդը դարձաւ հնացած, ռեալիզմն երեւոյթ: Սրան հար-
կաւոր է ավելացնել, որ մետաֆիզիկ աշխարհայացքը գլո-
նում էր իր սլաշտպանները հանձին որոշակի գոտակարգե-
րի, որ չահադրդոված են ամբողջ հնի սլահսլանմամբ, որ
սլաքարում են նոր, առաջավոր գոտակարգերի դեմ: Բուր-
ժուադիան սլրոլետարիատի դեմ մղած իր սլաքարում վկա-
յակոչում է հալիտենական նորմաները, որ թետրիապես
հիմնալորում են մետաֆիզիկայով: Այդ սլաոճաոով դիա-
լեկտիկական մեթոդը կարող էր աճել և իրասես աճեց մե-
տաֆիզիկ մեթոդի դեմ սլաքարելով:

Մարքսի ռեոլուցիոն դիալեկտիկան հենվում է մարդ-
կային մտքի սլատմական զարգացման, առանձնապես XVIII
դարի վերջի և XIX դարի առաջին կեսի զարգացման վերջին
ժամանակաշրջանի՝ բոլոր նլաճումների վրա, որը շատ
մեծ դեր խաղաց մարքսիստական դիալեկտիկական մե-
թոդի ծագման մեջ: Այդ ժամանակաշրջանը դիտություն-
ների զարգացման մեջ բնորոշվում է նրանով, որ դիտական
հետադոտման արդյունքները հերքում էին մետաֆիզիկ աշ-
խարհայացքը, սլնդում էին թե բնության մեջ կա կադի,
զարգացման, փոփոխության սկզբունք: Մեծագույն դիտա-
կան հայտնադործությունները, որ արել է այդ ժամանակա-
շրջանում դիտությունը երկրի, երկնքի, օրգանական աշ-
խարհի և այլնի սլատմության բնագալաոում, հոդ նախա-
սլատրաստեցին դիալեկտիկական աշխարհայացքի ծագման
համար: Մարքսն ու էնգելսը—բանվոր դասակարգի իդեո-
լոգներն ու ներկայացուցիչները—ընդհանրացրին դիտության
այս բոլոր սվյալները, ընդհանրացրին բոլոր էպոխաների
սլատմական շարժումների փորձը, բանվորների XIX դարի
սլաքարի փորձը և կոփեցին սլրոլետարիատի հատու գեն-
քը—դիալեկտիկական մեթոդը:

Սրանք են այն դիտողությունները, որ անհրաժեշտ էր
սլնել՝ անմիջականորեն առաջին օրենքին, մատերիալիստա-
կան դիալեկտիկայի առաջին գծին—բնության և հատարա-

կուլթյան երևույթների ընդհանուր կապի և փոխադարձ կախման օրենքին անցնելու համար:

Այսպես ուրեմն, ղիալեկտիկան—գիտություն է իրականության զարգացման ամենից ավելի ընդհանուր օրենքների մասին: Իսկ օրենքը իրականության ներքին կապերի, ներքին հարաբերությունների, մճռողական, օրդանական կապերի արտացոլումն է: Արդեն միայն այն, որ օրենքը երկվույթների ներքին, օրդանական կապերի արտացոլումն է, ցույց է տալիս մատերիալիստական ղիալեկտիկայի առաջին դժի մեծագույն նշանակութունը:

Դիալեկտիկական ուսմունքը կապի մասին՝ ուսմունք է իրականության օրինաչափ բնույթի մասին ի հակակշիռ մետաֆիզիկ մեթոդի, որը պնդում է, թե բնության և մարդկային հասարակության մեջ պատահականություններն են տիրապետողը:

Մետաֆիզիկական բացատում է իրականության երևույթների ընդհանուր կապը և գիտում է յուրաքանչյուր երևույթը մեկուսաբար, ինչպես ինքնըստինքյան գոյություն ունեցող, առանց մյուս երևույթների հետ կապ ունենալու:

Ահա մի քանի օրինակ, որոնք ցույց կտան մետաֆիզիկ մոտեցումը մարդկային հասարակության պատմությանը:

Ես ուզում եմ մի օրինակ վերցնել էնդելսի «Անտի-Դյուրինգ» երկից: Դուք գիտեք, որ Դյուրինգը, ելնելով այն բանից, որ բռնությունը հանդիսանում է մարդկային պատմության մճռողական էլեմենտը, իսկ հասարակության էկոնոմիկան՝ միայն երկրորդականը, որ նախորդող պատմության բոլոր երևույթները պետք է հանդեցնել բռնության, — հետևելություն արեց, որ առաջին բռնությունը, որ մարդիկ կատարեցին, մարդու առաջին բռնությունը մարդու նկատմամբ հասցրեց ստրկության ծագման, ծառայեց դասակարգերի բաժանված հասարակության զարգացման սկիզբ: Մարդու նկատմամբ մարդու գործադրած այս առաջին բռնության շնորհիվ գոյություն ունի, ասում էր Դյուրինգը, չահագործողական հասարակություն: Ելնելով սրանից, Դյուրինգը գոռոզաբար էր վերաբերվում հին հունական հասարակության

ներ, անտիկ կուլտուրային: Նա վերգովվում էր այն առթիվ, որ հունական կուլտուրան հիմնվում էր ստրկության վրա, ստրկատերերի կողմից ստրուկներ շահագործելու վրա: Նա արտահայտում էր հույժ շատ բարոյական ճշմարտություններ այս առթիվ: Դյուերինդը չէր կարողանում զիտականութեն բացատրել, թե ինչու գոյություն ունեն ստրկատիրական հասարակությունը: Բռնության իր իդեալիստական թեւորիայի լույսով նա մարդկային հասարակության յուրաքանչյուր երևույթի, նույն թվում նաև այնպիսի մի փաստի, ինչպես ստրկատիրական հասարակությունը, մոտենում էր իբրև պատահական երևույթի: Ստրկատիրական հասարակարգը նա չէր կապում մարդկային հասարակության նախորդող զարգացման հետ. չէր փորձում հետազոտել պատմական այն պայմանները, որոնք անխուսափելիորեն, պատմական անհրաժեշտությամբ հասցրին ստրկատիրական հասարակության ծագմանը: Նրա համար ստրկատիրական հասարակությունը մեկուսացած երևույթ էր, որը նա դիտում էր իր բարոյական, էթիկական թեորիայի տեսակետից: Միանգամայն բնական է, որ նման տեսակետով ստրկատիրական հասարակությունը կարող էր գոյություն ունենալ, կարող էր նաև գոյություն չունենալ՝ ամեն ինչ հանդիսանում է մաքուր պատահականության:

Էնդելսը, առարկելով Դյուերինդին, ցույց տվեց մի ուրիշ՝ դիալեկտիկական մոտեցում ստրկատիրական հասարակության գոյության փաստին, մոտեցում կապի և փոխադարձ կախման դիալեկտիկական օրենքի տեսակետից:

Նա ցույց է տալիս ստրկատիրական կարգի նշանակությունը մարդկային պատմության մեջ, հասարակության զարգացման բոլոր հետադառաստիճանների կապը այս կարգի հետ:

«Առանց ստրկության,—գրում էր Էնդելսը,—չէր լինի հունական պետություն, հունական արվեստ և գիտություն. առանց ստրկության չէր լինի նաև հռոմեական կայսրություն, իսկ առանց հունական կուլտուրայի և հռոմեական կայսրության հիմքի չէր լինի նաև արդի Եվրո-

պան: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ մեր ամբողջ տնտեսական, քաղաքական և ինտելեկտուալ զարգացումն իրեն նախապայման ունեւր մի այնպիսի կարգ, որի մեջ ոտրկութիւնը նույնքան անհրաժեշտ, որքան հանրածանոթ էլեմենտ էր: Այս իմաստով մենք իրավունք ունենք ասելու, որ առանց անտիկ ստրկութեան չէր լինի նաև արդի սոցիալիզմը:

Շատ հեշտ է ընդհանուր Փրազներ և բարձր բարոյական զայրույթ տեղալ ստրկութեան և դրա նման խայտառակ երևույթների առթիւ: Յաւուք սրտի, այդպիսի վրդովմունքով արտահայտւում է միայն այն, ինչ հայտնի է ամեն մեկին, այսինքն այն, որ այդ անտիկ հիմնարկները չեն համարաւանդում այլևս մեր արդի պայմաններին և մեր զգացմունքներին, որ որոշւում են այդ պայմաններով: Բայց այդպիսի վերաբերմունքը դեռևս ոչ մի նյութ չի տալիս պարզաբանելու համար այն, թե ինչպես ծաղեցին այդ կարգերը, ինչու նրանք դոյութիւն ունեին և ինչպիսի դեր նրանք խաղացին պատմութեան մեջ: Եւ եթե շոշափենք այդ հարցը, ապա մենք պետք է ասենք,—որքան էլ հակասականորեն և հերետիկոսորեն դա հնչելու լինի,—որ ստրկութեան մտցնելն այն ժամանակվա պայմաններում խոշոր պրոգրես էր¹:

Ինչպես տեսնում եք, ինդելսն այս երևույթը վերցնում է ուրիշ երևույթների կապակցութեամբ: Նա ցույց է տալիս ոտրկատիրական հասարակութեան դոյացման պատճառները, գրանք կապի մեջ է դնում այն փոփոխութեանների հետ, որոնք տեղի էին ունենում նախնական համայնական կարգի շրջանակներում: Համայնքի քայքայման պրոցեսը աշխախատանքի արտադրողականութեան զարգացման հետեանքով պայմաններ ստեղծեց նոր, ամէլի պրոգրեսիւ կարգի ծագման համար: Եւ եթե, դիտելով ստրկատիրական հասարակութեան դոյութեան փաստը, մենք վերցնելու լինենք նրան այն բանի հետ ունեցած կապակցութեանից դուրս, ինչ տե-

1 Ենգելս, Անտի-Դյուրինգ, էջ 148, 1938 թիւ:

դի էր ունենում նախնադարյան—համայնական կարգի ժամանակ, այսինքն, մետաֆիզիկորեն դիտելու լինենք երևույթները՝ այն ժամանակ ստրկատիրական հասարակությունը կներկայանա մեր առջև ոչ թե իբրև հասարակության օրինաչափ զարգացման արդյունք, այլ իբրև հետևանք հասարակության զուտ պատահական զարգացման, իբրև հետևանք, ասենք, այն ժամանակվա մարդկանց անբարոյության, որոնք թույլ էին տալիս այնպիսի «խայտառակ» երեւույթ, ինչպես մարդկանց բաժանումը ստրուկների և ստրկատերերի:

Վերցրեք մի ուրիշ օրինակ, — պատմական պրոգրեսիվ մեթոդում նարոդնիկության հայտնի թեորետիկ Լավրովի կողմից:

Լավրովը գտնում է, որ մարդկային հասարակության ամբողջ պատմությունը էքսպերիմենտների, փորձերի դումար, չղթա է, որոնք կատարվում են այս կամ այն թեորետական ենթադրության տեսակետից: Այսպես, ամբողջ պատմության ընթացքում թագավորները, կայսրները, մինիստրները, պետական դորժիչները, փիլիսոփաները, ելնելով իրենց որոշակի թեորիական հայացքներից, կատարում են այս կամ այն հասարակական էքսպերիմենտները, նման այն բանին, ինչպես Փիզիկոսը կամ քիմիկոսը էքսպերիմենտներ է անում իր բնագավառում: Բայց եթե, ասում է Լավրովը, էքսպերիմենտները Փիզիկայում և քիմիայում միշտ չէ, որ հետք են թողնում պատմության մեջ, ապա սոցիոլոգիական էքսպերիմենտները հաճախ առաջացնում են շատ տխուր հետևանքներ: Եվ ահա արդի, ճշմարիտ փիլիսոփայության խնդիրն այն է, որպեսզի էքսպերիմենտների պատմությունից ընտրի այն տարրերը, որոնք ամենից ավելի են համապատասխանում մարդկային բնությանը և մարդկային սահանջմունքներին, այն էլեմենտները, որոնք համապատասխանում են արդարության, բարոյականության հավիտենական իդեալին, և ստեղծի պատմական պրոգրեսի նոր գիտական ֆորմուլա:

Նրա «Ո՞ւմ է պատկանում ապագան» հոդվածից կրեքեմ որոշ քաղվածքներ: Այս հոդվածում Լավրովը գրում է.

«...Ամբողջ պատմութիւնը ներկայացնում է մի շարք սոցիոլոգիական փորձեր, որ կատարվել են ամենաընդարձակ չափերով. դա—նյութ է մարդկային պահանջմունքները հայտարարելու համար՝ ինչպես նրանց անիմփոխ, անթրոպոլոգիկ ձևով, այնպես էլ այն ձևով, որ փոխվում է կուլտուրայի ազդեցութեամբ. դա նյութ է՝ հայտարարելու համար համակեցութեան այս կամ այն ձևի՝ պահանջմունքներին առավել կամ պակաս չափով համապատասխան լինելը, հայտարարելու համար հասարակութեան վրա օրենսդրութեան դրժուկ, կրօնական հալատալիքի, պետական աղմկնխտարացիայի կողմից, նոր սովորութիւնները, նոր մտքերի, քաղաքակրթութեան նոր ուղղութեան տարածմամբ համակեցութեան մեջ մտցված աստիճանական կամ կտրուկ ռեֆորմների դժբաժն ազդեցութիւնը. դա նյութ է՝ հայտարարելու համար ռեւոլուցիաների սոցիոլոգիական նշանակութիւնը՝ նրանց գենեղիսում և նրանց հետեանքներում»¹:

«Ձուր չէին դարգանում,—այնուհետև դրում է Լավրովը,—տնտեսական և պետական թեորիաները. դուր չէին սոցիալիզմի ալքիմիկոսները, Պլատոնները և Մորերը, Սեն-Սիմոնները և Փուրյենները փորձում իրենց փիլիսոփայական քարը, անմահութեան իրենց էլեքսիրը. դուր չէին XVIII դարի կեսի թագավորները և միլիտորները էքսպերիմենտում (փորձառում) բարձրից կատարվող ռեֆորմների օգնութեամբ. դուր չէին քաղաքական ռեւոլուցիոներները էքսպերիմենտում պառլամենտական մի շարք բանաձևերի միջոցով, կոնստիտուցիաների և կոդեքսների փոփոխութեան միջոցով: Այդ բոլոր թեորետիկ և պրակտիկ փորձերը ամբողջ իրենց հետեանքները՝ միանգամայն որոշակի հետեանքները ուշադիր և անաչառ դիտողի համար»²:

Լավրովը գտնում է, որ բոլոր այդ փորձերը նյութեր են տալիս նրա համար, որպեսզի պատմութիւնից ընտրվի ամենադնահատելին և ստեղծվի պատմական պրոգրեսի Փորմուլան:

1 Լավրով, *Երկեր*, Հ. III, էջ 133—134:

2 Նույն տեղում, էջ 134—135:

«Բոլոր այդ տղայինքը, —ասում է Լավրովը, —միանդամայն բալական են, որպեսզի ճշմարտությանը բարեխղճորեն ձգտելու դեպքում, նմանի ջանադիր մոտեցման և ոչ-նմանի բաժանման դեպքում մշակվի հիմնական սոցիոլոգիական ճշմարտությունների պարզ ըմբռնում, այսինքն, պարզաբանվեն մարդկային բնական և առողջ պահանջմունքները, որոնք կարող են և պետք է բալարարվեն ճիշտ համակեցությամբ»¹ :

Դժվար է հասկանալ, որ այս թեորիան իր հիմքում մաքուր մետաֆիզիկական է : Ի՞նչպես է Լավրովը մոտենում մարդկային պատմությանը : Ոչ թե ինչպես օրինաչափ դարդացման, այլ որպես իրադարձությունների քաոսի, որպես մի երևույթի, որի մեջ կամայականություն է տիրապետում : Այս պատմական քաոսում, պատահականություն այս թագալորություն մեջ դուք կարող եք ձեզ զգալ, որպես տեր, դուք կարող եք անել այն ամենը, ինչ ուզում եք, կարող եք կամայականորեն համակցել փորձի այս կտորները և կամայականորեն կառուցել պատմական պրոզերսի այս կամ այն ֆորմուլան, որը ձեր հայացքով ավելի է համապատասխանում հավիտենական արդարությունը : Լավրովը և նրա նման թեորետիկները կամայականորեն պոկում են երևույթները իրականություն մյուս երևույթների կապակցությունից, և այդ պատճառով պատմության մեջ նրանց համար ոչ մի օրինաչափություն չկա :

Նույն այդ հետևություններին է բերում մետաֆիզիկական տեսակետը նաև բնագիտություն բնագալառում :

Վերցրեք մինչդարյվինյան ամբողջ գիտությունը : Օրդանական աշխարհի մասին մինչդարյվինյան ուսմունքները կենդանիների և բույսերի աշխարհը գիտում էին ոչ թե որպես օրինաչափ կապ նրանց և բնական պայմանների միջև, ոչ թե որպես երևույթների ամենաբարդ փոխազդեցություն, որտեղ ամեն ինչ միահյուսված է և գտնվում է ամենասերտ փոխադարձ կախման մեջ, այլ իբրև մեկուսացած օրգանական ձև-

¹ Լավրով, Երկեր, 4. III, էջ 134 :

վերի աշխարհ, որոնք դոյություն ունեն մեկը մյուսից անկախ, մեկը մյուսի փոխադրեցությունից դուրս, փոփոխությունից դուրս: Բոլոր օրգանական էակները, համաձայն այս ուսմունքների, մի անգամ ձուլվել են մեկընդմիջ տրված և անփոփոխ ձևերի մեջ:

Բոլորովին այլ կերպ է մոտենում կապի հարցին մատերիալիստական դիալեկտիկան: Լենինը տվել է մի ֆորմալա, որը ցույց է տալիս կապի դիալեկտիկական թեորիայի մեծագույն նշանակությունը: Լենինը գրում էր. «...կապը, որ տալիս է շարժման միասնական, օրինաչափ համաշխարհային պրոցես»: Լենինյան այս մտքի մեջ շատ խորն է երևան բերված երևույթների կապի դիալեկտիկական օրենքի նշանակությունը: Լենինի այս բառերը նշանակում են, որ երևույթների կապի միայն դիալեկտիկական տեսակետից են բնութայնում և մարդկային հասարակությունը դադարում պատահականությունների քաոս թվալուց, որովհետև բնության մեջ եղած օբյեկտիվ կապերի և փոխադրեցության անալիզը ցույց է տալիս նրա դարգացման օրինաչափ բնույթը:

Եվ սա հասկանալի է: Քանի որ իրականության մեջ բոլոր երևույթները կապված են իրար, քանի որ երևույթների միջև դոյություն ունի օրգանական, ներքին կապ, ներքին փոխադրեցություն, ապա չի կարելի հասկանալ ոչ մի երևույթ առանց նրա՝ մյուս երևույթների հետ ունեցած կապի, որովհետև մի երևույթը պատճառ է ծառայում մյուսի ծագման համար: Եթե այս տեսակետից մոտենալու լինենք արեգակնային սխտեմի և մեր մոլորակի դոյացման պատմությանը, ընդհուպ մինչև մտածող մարդու երևալը նրա վրա, ապա մենք կստանանք շարժման միասնական օրինաչափ համաշխարհային պրոցեսի շատ վառ պատկերը:

Էնդեղը «Բնության դիալեկտիկայում» ցույց է տալիս շարժման այդ միասնական օրինաչափ համաշխարհային պրոցեսը: Փոքրիկ, սեղմ ուրվագծում նա ցույց է տալիս շարժման պրոցեսը չիկացած դադակերպ միզամածությունից, որից դոյացել է մեր մոլորակը, մինչև մարդը, և ձեր

առջև պատկերանում է այն շարժման նկարը, որի բնույթը չափ ճշտությամբ որոշված է Լենինի Փորձուլայով:

Էնդելը գրում է.

«Գաղի շիկացած պտտվող մասսաներից, որոնց շարժման օրենքները, թերևս, մեզ հայտնի կդառնան աստղերի սեփական շարժման վերաբերմամբ միջանի հարյուրամյակների դիտողություններից հետո միայն, չնորհիվ սառչելու և սեղմվելու, զարգացան անթիվ արեգակներ և Ծիրկաթինի վերջին աստղային օղակներով սահմանափակված մեր տիեզերական կղզու արեգակնային սիստեմաները»¹:

Առանձին մարմինների սառչելու և սեղմվելու այս պրոցեսը պատճառ հանդիսացավ հետագա զարգացման և կապի մեջ է դրվում նրա հետ:

«Այսպիսով դոյացած առանձին մարմինների—արեգակների, մոլորակների, արբանյակների վրա սկզբնապես տիրապետում է մատերիայի շարժման այն ձևը, որը մենք անվանում ենք ջերմություն: Խոսք անգամ չի կարող լինել էլեմենտների քիմիական միացումների մասին անգամ այն ջերմատիճանի դեպքում, որն ունի դեռ մեր ժամանակ արեգակը...»

Առանձին մարմինները սառչում են այնքան ավելի արագ, որքան նրանք փոքր են: Սկզբից սառչում են արբանյակները, աստերոիդները, մետեորները. մեր լուսինը վաղուց արդեն հանդել է: Ավելի դանդաղ են սառչում մոլորակները, բոլորից ավելի դանդաղ է սառչում կենտրոնական լուսատուն»²:

Եվ այնուհետև Էնդելը ցույց է տալիս, թե ինչպես չնորհիվ պլազմանավորվածության և երեույթների կապի, չնորհիվ այն պրոցեսների, որոնք բնության զարգացման այս աստիճանի վրա կատարվում են, մինչև որ հայտնվում է կյանքի առաջնային ձևը, պլազմաներ են ստեղծվում կյանքի ծաղման համար:

¹ Մարքս և Էնգելս, Երկեր, հ. XIV, էջ 484:

² Նույն տեղում, էջ 485:



«Այն էսդիսան, երբ մոլորակը ձեռք է բերում պինդ կեղև և ջրի կուտակումներ իր մակերևույթի վրա, զուգադիպում է այն էսդիսային, երբ նրա սեփական ջերմությունն սկսում է ավելի ու ավելի քիչ նշանակություն ունենալ համեմատած այն ջերմության հետ, որ նա ստանում է կենտրոնական լուսատուից:

Վերջապես, եթե ջերմաստիճանը սառեց այնքան, որ մակերևույթի գոնե որևէ նշանակելի մասում նա արդեն չի անցնում այն սահմանից, որի ժամանակ ընդունակ է դոյություն ունենալու սպիտակուցը, ապա, նպաստավոր քիմիական պայմանների առկայությամբ՝ դոյանում է կենդանի պրոտոպլազմա»¹:

Հետևապես, մեր մոլորակի վրա կյանքի ծաղումը պատահական հետևանք չէ, այլ մատերիայի օրինաչափ դարպացման արդյունք, նյութական շարժման տարրեր ձևերի փոխադրեցության արդյունք:

Այնուհետև ինդելսը ցույց է տալիս, թե ինչպես օրդանական բնության մեջ տեղի ունեցող բոլոր նախորդող պրոցեսների հետևանքը եղավ մարդու ծագումը:

«Թերևս, անցել են հազարամյակներ, մինչև որ ստեղծվել են դեպի առաջ հետևյալ քայլն անելու համար անհրաժեշտ պայմաններ, և այս անձև սպիտակուցից... Հնորհիվ կորիզի և թաղանթի դոյացման ծաղիկ է առաջին բջիջը: Բայց այս առաջին բջիջի հետ միասին տրվեց նաև ամբողջ օրդանական աշխարհի ձևադոյացման հիմունքը: Սկզբից դոյացան, ինչպես մենք պետք է ենթադրենք այս, ըստ պրեոնտոլոգիական տարեգրության տվյալների, անբջիջ և բջիջային պրոտիստների անթիվ տեսակները... որոնցից մի քանիսը, աստիճանաբար զիֆերենցիալայի ենթադրվեցին որպես առաջին բույսեր, իսկ մյուսները՝ որպես առաջին կենդանիներ: Իսկ առաջին կենդանիներից զարգացան—զբլխավորապես հետագա զիֆերենցիալայի միջոցով—կենդանիների անթիվ դասակարգեր, կարդեր, ընտանիքներ, տոհմ-

¹ Մարքս և Էնգելս, Երկեր, հ. XIV, էջ 485—486:

մեր և տեսակներ և, վերջապես, կենդանիների այն ցեղը, որի մեջ իր լիակատար զարգացմանն է հասնում ներվային ռիտմը, այսինքն՝ ողնաշարավորները և դարձյալ, վերջապես, վերջիններեա մեջ, այն ողնաշարավորը, որի մեջ բնութայունը հասաւ մինչև ինքնաճանաչութեան—մարդը¹ :

Ահա ձեզ շարժման միասնական համաշխարհային օրինաչափի պրոցեսի պատկերը՝ նկարված էնդելսի հանճարեղ ձեռքով: Ինչպես տեսնում եք, այդ պատկերը կարող էր նկարվել միայն պայմանով, որ բնութային պատմութեանը մոտենանք դիալեկտիկայի, երևույթների դիալեկտիկական կապի և փոխադարձ կախման տեսակետից: Բայց դուք գիտեք, որ մարդը ոչ միայն բնութային զարգացման արդափունքն է, այլև հասարակութեան զարգացման արդասիքը, աշխատանքի զարգացման արդասիքը: Մենք կարող ենք շարունակել պատմութեան զարգացման տարեգրութեանը և հետևել բուն մարդկային հասարակութեան շարժմանը—հասարակութեան նախնադարյան վիճակից մինչև սոցիալիզմը, որ կառուցված է մեզանում, և դուք դարձյալ կհամոզվեք, որ շնորհիվ այն ներքին կապի, որ կա տարբեր հասարակական Փորձացիւնների միջև, դոյութեան ունի մարդկային հասարակութեան շարժման միասնական օրինաչափ համաշխարհային պրոցես:

Այսպիսով, դիալեկտիկական ուսմունքը բնութային և հասարակութեան երևույթների մեջ եղած կապի և փոխադարձ կախման մասին՝ տալիս է միակ ճիշտ պատկերացումը բնութեան և մարդկային հասարակութեան մասին, հենց այնպիսի պատկերացում, որն արտացոլում է իրականութեան զարգացման օրինաչափ բնույթը:

Դիալեկտիկական ուսմունքը բնութային և հասարակութեան մեջ եղած երևույթների կապի և փոխադարձ կախման մասին, ինչպես և դիալեկտիկական ամբողջութեամբ՝ հնարավորութեան է տալիս նախատեսելու իրադարձութեանները ընթացքը, մինչդեռ երևույթների փոխադարձ կապի ժեռա-

¹ Մարքս և Էնգելս, Երկեր, հ. XIV, էջ 486:

Ֆիզիկի բացասումը չի տալիս այդ հնարավորությունը: Իսկապես, եթե առանձին պատմական իրադարձություններ միջև և մարդկային հասարակության դարդացման ամբողջ ընթացքի մեջ գոյություն ունի ներքին, օրդանական կապ, ապա, կոնկրետորեն հետևելով կարևորագույն հետևանքների շղթայի զարդացմանը՝ կարելի է հասկանալ, թե դեպի ուր է զարգանում այս կամ այն երևույթը: Դա մասնավորապես հնարավոր է այն պատճառով, որ պատմության մատերիալիստական բմբռնումը ցույց է տալիս, թե որոնք են վճռող, կարևորագույն կապերը մարդկային հասարակության մեջ: Մարքսը ցույց տվեց, որ, որպեսզի մարդը կարողանա գոյություն ունենալ, նա անհրաժեշտորեն պետք է կապված լինի ուրիշ մարդկանց հետ և որ իրրև մարդկանց միջև կապի երկարատև վճռողական ձև, կապի, որ իրենով որոշում է մարդկային պատմության ամբողջ ընթացքը, հանդես է գալիս արտադրական կապը, արտադրական հարաբերությունները, տնտեսական բաղիսը, որի հիման վրա բարձրանում են բոլոր վերնաշենքերը—քաղաքական և իդեոլոգիական:

Նա կրերեմ մեկ օրինակ միայն, որը ցույց կտա, որ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների համար բնորոշ է այն, որ նրանք յուրաքանչյուր հասարակական երևույթ, յուրաքանչյուր պատմական իրադարձություն դիտում են իրադարձությունների ամբողջ կոմպլեքսի, ամբողջ միակցության կապակցությամբ և այդ հիման վրա տալիս են նախատեսություն փայլուն օրինակներ:

Հիշեցեք 1929 թվականի սկիզբը մեր երկրում: Նշենով նեպի՝ որպես մասնավոր սեփականատերերի առևտրի լիակատար ազատության՝ միակողմանի հասկացումից՝ աջերն առաջարկում էին հացի շուկայի այսպես կոչված «նորմալիզացիա», այսինքն, հացի դների բարձրացում: Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Պ Կենտկոմի սլենումում 1929 թ. ապրիլին աջ կապիտուլանտների այս առաջարկը ենթարկեց անալիզի և խորտակիչ քննադատության: Նա դիտեց այդ առաջարկը բոլոր այն պայմանների կապակցությամբ, որոնց մեջ

դանվում էր երկիրը: Նա հետևեց այն հետևանքների ամբողջ շղթային, որ օրինաչափորեն բղխում են հացի գները բարձրացնելու առաջարկից: Նա ասում էր. մի բույս ենթադրենք, որ մենք բարձրացնում ենք հացի գները: Պետք է հիշեցնել, որ խոսքը վերաբերում է մինչև համատարած կոլեկտիվացումն ընկած ժամանակաշրջանին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ կուլակուլթյունը դեռ չէր վերացված, որպես դասակարգ, երբ սովխոզները և կոլխոզները դեռ չէին տալիս երկրին հացի անհրաժեշտ քանակը: Ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ աջերի այս առաջարկի իրազորման առաջին հետևանքը կհանդիսանար այն, որ հաց ունեցողները, իմանալով գների բարձրացման մասին, կսկսեին հացը մինչև դարուն, սպասելով գների նոր բարձրացման: Դրանից, ասում է ընկեր Ստալինը, կհաճեին կուլակները և տանուլ կտային դյուղի սակավագուր խավերը, չքավորութունը: Չքավորութունը դարնանը կդառնար ծանր դրության մեջ. նա պետք է հաց դնի սերմացուի և սեփական սպառման համար, բայց կուլակները գները բարձրացրել են և ձգտում են ստրկացնելու դյուղական չքավորութունը:

Բայց հացի գների բարձրացման այս հետևանքն իր հերթին, ասում է ընկեր Ստալինը, պատճառ կհանդիսանար հումքի գները բարձրացնելու անհրաժեշտության: Ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ չի կարելի հացի գները դիտել հումքի գներից մեկուսացված: Հացի գների և հումքի գների միջև պրոսպորցիա պահպանելու համար պետք էր բարձրացնել նաև հումքի գները: Բայց սրանով էլ չէր վերջանա հետևանքների ամբողջ շղթան: Չի կարելի հացի գների բարձրացումը դիտել քաղաքից մեկուսացված: Եթե մենք բարձրացնենք հացի գինը, ապա այն բանվորները, որոնք գնում են այդ հացն իրենց սեփական սպառման համար՝ կընկնեն անձեռնտու դրության մեջ: Հետևաբար, պետք է դիմել հետևյալ քայլին—պետք է բարձրացնել բանվորների աշխատավարձը: Սակայն մենք կարո՞ղ ենք, արդյոք, նաև այս երևույթը դիտել մեկուսացված այն հետևանքներից, որոնց

նա կհասցնի: Աշխատավարձի բարձրացումը նշանակում է ոչ այլ ինչ, քան միջոցների փոխանցում քաղաքից դուրսը, որովհետև բանվորները բարձրացված աշխատավարձի հաշվին են հաց գնելու: Ընկեր Ստալինն աշխուհետև ցույց է տալիս, որ միջոցների փոխանցումը քաղաքից դուրս՝ նշանակում է երկրի ինդուստրացման շահերի արմատական խախտում: Իսկ երկրի ինդուստրացման արմատական շահերի խախտումն իր հերթին, ասում է ընկեր Ստալինը, կհանդիսանա սոցիալիզմի ամբողջ դործի, սոցիալիստական շինարարության ամբողջ դործի քայքայման պատճառ: Եվ ընկեր Ստալինն իր անալիզի վերջում հարցնում է. «Բանվորներն ու գյուղի սակավազոր խավերը լիակատար իրավունք կունենան հարցնելու մեզ՝ մենք ո՞ւմ իշխանություն ենք, բանվորա-գյուղացիական, թե՞ կուլակային-նեպմանական»¹:

Այսպիսով, աջ կապիտալիստներին առաջարկը կապի մեջ դնելով ուրիշ երևույթների հետ՝ ընկեր Ստալինը այս հարցը բարձրացրեց սկզբունքային հսկայական բարձրության՝ ցույց տալով, որ այս հարցի լուծումը կապված է սոցիալիզմի բախտի հետ մեր երկրում: Դիալեկտիկական մոտեցումը հացի գների բարձրացման առաջարկին այն պայմաններում թույլ տվեց նախատեսել իրադարձությունների ամբողջ հնարավոր ընթացքը, եթե պարտիան կանգներ այդ առաջարկի ճանապարհին: Ընկեր Ստալինի դիալեկտիկական անալիզը հնարավորություն տվեց ճշտություն օրոշելու, թե հոգուտ որ դասակարգի շահերի էր առաջադրված աջերի առաջարկը: Իսկ իրականությունն այսպիսի անալիզը բոլորում է դիալեկտիկական օրենքից, որի համաձայն իրականությունը բոլոր կողմերը գտնվում են փոխադարձ կապի, որոշ փոխհարաբերությունների մեջ մեկը մյուսի հետ:

Այժմ անցնենք հետևյալ հարցին: Մենք ասում ենք, որ մարքսիստական դիալեկտիկան արտացոլում է երևույթների օբյեկտիվ կապը միմյանց հետ: Արդյոք սա նշանակո՞ւմ է

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 293, Պետքաղհրատ, 1940 թ.:

այն, որ բոլոր հարաբերությունները և կապերն առարկաների միջև իրավահավասար են, միատեսակ կարևոր են, կամ կան ավելի էական և պակաս էական կապեր: Սա շատ կարևոր հարց է, որի ճիշտ լուծումից շատ բան է կախված թեորևայի և քաղաքականության մեջ:

Ամենից առաջ այս հարցի մետաֆիզիկական լուծման մասին: Պետք է աչքաթող չանել, որ ոչ բոլոր մետաֆիզիկներն են բացասում երևույթների կապը բնության և հասարակության մեջ: Հայտնի են փիլիսոփաներ, որոնք կանգնած են մետաֆիզիկական տեսակետի վրա, բայց այնուամենայնիվ ընդունում են կապի գոյությունը երևույթների միջև: Վերցրե՛ք, օրինակ, Փրանսական մատերիալիստ Հոլբախին, որն ընդունում էր կապի առկայությունը երևույթների միջև, դրում եր այդ կապերի մասին, բայց նրանց հասկանում էր բոլորովին մետաֆիզիկորեն: Հոլբախի տեսակետից ամեն մի երևույթ, անգամ ամենաբերորդականը, կարող էր լինել մեծագույն հեղաշրջումների պատճառ մարդկային հասարակության մեջ: Հոլբախը գրում էր, որ կնոջ կապրիզը կամ թագավորի վատ մարտողությունը կարող է լինել այնպիսի հետևանքների պատճառ, որոնք ենթադրեն էլ դժվար է, որ նրանք կարող են առաջացնեն մեծագույն կատակլիզմներ պատմության մեջ: Հասկանալի է, որ թեև դա հենց երևույթների միջև եղած կապի և փոխադարձ կախման ճանաչումն է, բայց մետաֆիզիկական ճանաչումը, որովհետև այստեղ չեն տարբերվում էական, օրդանական և ոչ-օրդանական, արտաքին, պատահական կապերը: Կապի այսպիսի հասկացումը հասցնում է ֆատալիզմի, այն պատկերացման, թե պատմության մեջ ամեն բան կատարվում է ինչ-որ օրհասի, ճակատագրի գորությամբ, որ մարդը ոչ մի դեր չի խաղում պատմության մեջ: Պատմությունը կատարվում է ինքնըստինքյան, առանց մարդու, մարդը կարող է նստել ձեռքերը ծալած և սպասել, թե երբ պատմությունն ինքը կկատարի իր լավ թե վատ գործերը:

Կապի ըմբռնման այս մետաֆիզիկ տեսակետը հասցնում է նաև ուրիշ հետևանքների. այս ըմբռնման վրա է

հիմնվում է մարտիկ և էկլեկտիկ մոտեցումն իրականությանը, փոխադրեցության մեռած մետաֆիզիկ թեորիան, որ բացասում է գլխավորը, վճռողականը, հիմնականը առարկաների բոլոր կապերում և փոխհարաբերություններում:

Ես ուղում եմ բերել միջանի օրինակ, որոնք կօղենն հասկանալու հարցի այս կողմը:

Հիշեցեք դեպի լուսիան պրոֆմիտությունների մասին, այն մասին, թե ինչ են իրենցից ներկայացնում պրոֆմիտությունները՝ կոմունիզմի դպրոց թե պետական ապարատի մի մասը: Բուխարին էկլեկտիկորեն որոշում էր պրոֆմիտությունները քե՛լ իբրև կոմունիզմի դպրոց և քե՛լ իբրև պետական իշխանության ապարատի մի մաս: Իր հակալենինյան թեորիայի «տրամաբանական» հիմնավորման համար նա բերում էր բաժակի օրինակը: Իբրև թե բաժակը հանդիսանում է քե՛լ ապակե գլան և քե՛լ խմելու գործիք, և այդ պատճառով չի կարելի անտեսել նրա բոլոր հատկությունները, վերցնել միայն նրանից միջանիսը և անցնել մյուսների կողքով: Լենինը մերկացնում է այս էկլեկտիկ մոտեցումը, որը շփոթում է առարկայի բոլոր կապերը, որը չի առանձնացնում նրա հիմնական, վճռողական հարաբերությունները: Լենինն ասում էր. այո, յուրաքանչյուր բաժակ գտնվում է հազար հարաբերությունների մեջ ուրիշ առարկաների հետ, նա ունի տասնյակ հատկություններ. նա և՛ ապակե գլան է, և՛ խմելու գործիք, և՛ առարկա նետելու համար և այլն և այլն: Փորձալ լողիկան, ասում է Լենինը, վերցնում է առարկայի տարբեր որոշումները և դրանք իրար միացնում բոլորովին պատահականորեն: Դա զուտ էկլեկտիկ տեսակետ է. «...Եթե ինձ հիմա բաժակ է հարկավոր, որպես խմելու գործիք, ապա ինձ համար բոլորովին կարևոր չէ դիտենալ, թե արդյոք ամբողջովին է նա գլանաձև և արդյոք նա իրոք չինված է ապակուց, բայց դրա փոխարեն կարևոր է, որպեսդի տակը ճեղքվածք չլինի, որպեսդի գործածելով այդ բաժակը չվիրավորեմ իմ շրթունքները և այլն: Իսկ եթե ինձ հարկավոր է բաժակը ոչ խմելիքի համար, այլ այնպիսի մի գործածություն, որի համար պետքական է ամեն մի ապակե

դլան, այն ժամանակ ինձ համար պետքական է նաև ճեղք-
ված կամ նույնիսկ բոլորովին անտակ բաժակը և այլն»¹ :
Ամբողջ բանն այն է, որ նայած պատմական տարրեր
պայմաններին, փոխվում է առարկայի կապը շրջապատող
աշխարհի հետ, նրա նշանակումը մարդկանց համար: Պետք
է միշտ ելնել էական, վճռողական հարաբերություններից:
Այլ կերպ ասած, եթե այս հարցը փոխադրենք այն վեճերի
բնավալաւը, որոնք կային պրոֆմիությունների վերաբե-
րյալ դիսկուսիայում, ապա Լենինը հարցն այսպես էր դնում.
Ի՞նչ բան են պրոֆմիությունները վճռողական կապերի տե-
սակետից, պատմական տվյալ կոնկրետ պայմանների տե-
սակետից: Եվ կոմունիզմի դպրոց և պետական կառավար-
ման ապարատ: Ոչ, պատասխանում է Լենինը, տվյալ մո-
մենտի տեսակետից, տվյալ պայմաններում, եթե պրոֆմիու-
թյունները կապի մեջ դնենք երկրի ամբողջ դրության հետ,
եթե պրոֆմիություններին պատմականորեն մոտենանք,
ապա պրոֆմիությունները կոմունիզմի դպրոց են, կառա-
վարման դպրոց: Լենինը կոնկրետորեն վերլուծում է պրոֆ-
միությունների՝ որպես արտադրության կառավարման ապա-
րատի՝ վերաբերյալ հարցի դրվածքը: Համեմատեցեք, ասում
է նա, անմիջականորեն կառավարողների (մոտ 90 հազ.)
չնչին մասը կառավարվողների հսկայական բանակի —
պրոֆմիությունների անդամների մասսայի (մոտ 6 միլիոն)
հետ, և դուք կտեսնեք, որ 98½ % սովորում են, այսինքն,
պրոֆմիությունները դպրոց են համախմբման, համերաշ-
խության դպրոց, տնտեսավարման դպրոց, կառավարման
դպրոց:

Ի՞նչ է ցույց տալիս այս օրինակը: Նա ցույց է տալիս,
որ քիչ է հասկանալը, թե յուրաքանչյուր առարկա, յուրա-
քանչյուր իր կարող է ունենալ տասնյակներով ամեն տեսա-
կի կապեր և հարաբերություններ շրջապատող աշխարհի
հետ: Ամբողջ բանն այն է, որպեսզի տեսնենք, վճռողական,
ներքին կապերը, մոտենանք նրանց պատմականորեն և սրանից

¹ Լենին, Երկեր, Կ. XXVI, էջ 134:

հետեւություն անենք տվյալ առարկայի նշանակության մասին:

Դարձյալ մի օրինակ: Ես նկատի ունեմ Լենինի ելույթը Կառուցիւ դեմ 1914—1917 թվականներին առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: II Ինտերնացիոնալի առաջնորդները ելնում էին հայրենիքի պաշտպանության լողունով: Նրանք բացատում էին պատերազմի իմպերիալիստական բնույթն այն պատճառով, որ իմպերիալիզմն իբրեւ թե դեռ ուսումնասիրված չէ լիովին, որ նրա ոչ բոլոր կողմերն ու կապերն են հասկանալի, որ իբրեւ թե հարկավոր է դեռ քննարկել իմպերիալիզմի հարցը: Ըստ Կառուցիւ, մինչև այն ժամանակ, քանի հետազոտված չեն բոլոր հնարավոր հարաբերությունները և կապերը,—լստորում օրդանական, մեծողական կապերը Կառուցիւն նենդափոխում է մասնավոր, երկրորդական կապերով,—մինչև այն ժամանակ չի կարելի ոչինչ ասել իմպերիալիզմի, հետեւապես, նաև տվյալ պատերազմի իմպերիալիստական բնույթի մասին:

Լենինը, հանդես գալով Կառուցիւ դեմ և քննադատելով նրա տեսակետը, տալիս է շատ հետաքրքրական բան երևույթների դիալեկտիկական կապը և փոխադարձ կախումն ըմբռնելու համար: Լենինը գրում էր. «...Սոցիալիստական պարտիաները դիսկուսիոն աղումքներ չեն, այլ պայքարող պրոլետարիատի կազմակերպություններ, և երբ մի շարք դոմարտակներ անցան թշնամու կողմը, նրանց հարկավոր է անվանել և վարկարկել որպես դավաճանների, թույլ չտալով, որ քեզ «ճանկեն» կեղծավոր ճառերով այն մասին, թե «ոչ բոլորն են միատեսակ» հասկանում իմպերիալիզմը, թե ահա չովինիստ Կառուցիւն և չովինիստ Կունովն ընդունակ են գրելու այդ մասին հատորներ, թե հարցը «քիչ է քննարկված» և այլն և այլն»¹:

Եվ այնուհետև Լենինն անում է հետևյալ դիտողությունը. «Կապիտալիզմը իր կողոպուտի բոլոր արտահայտություններում և նրա պատմական զարգացման ու նրա ազ-

¹ Լենին, Երկեր, հ. XVIII, էջ 243:

դաշին առանձնահատկությունների բոլոր մանրագույն ճյուղավորումներում երբեք չի լինելու ուսումնասիրված միջև վերջը. մանրամասների վերաբերյալ գիտնականները (առանձնապես պեղանոսները) երբեք չեն դադարի վիճելու»¹։

Կառուցելու և նրա դործակիցների համար կարևոր էլ էր, որ իմպերիալիզմը երևան է բերված իր հիմնական, մեծողական կապերով։ Նրանք չէին կարող և իրեն բուրժուազիայի սպասավորներ չէին ուզում հասկանալ, որ դարձյալ մեկ որևէ երկրորդական փաստի հետազոտությունը ոչինչ չի կարող փոխել իմպերիալիզմի ընդհանուր պատկերի մեջ։ Բայց այդ ամբողջ մետաֆիզիկական մեթոդոլոգիան նրանց պետք էր նրա համար, որպեսզի մեկ որևէ մասնավոր փաստի օգնությամբ հերքեն գլխավորը, հիմնականը, ինչ բնորոշ էր 1914—1917 թվականների պատերազմի համար՝ նրա իմպերիալիստական բնույթը։ Այսպես, Կառուցելին վերջնում է այնպիսի մասնավոր տարր այդ պատերազմում, ինչպիսին է Սերբիայի ազգային ազատագրական պայքարը, և այդ մասնավոր փաստը դարձնում է գլխավորը։ Այդ փաստից նա հետևություն էր անում, որ պատերազմը չունի զուտ իմպերիալիստական բնույթ։

Այս առթիվ Լենինը գրում էր.

«Դիալեկտիկան դառնում է ամենաստույր, ամենացածր սոփիստիկա։

Ազգային էլեմենտը ներկա պատերազմում ներկայացված է միայն Սերբիայի պատերազմով Ալստրիայի դեմ (օր նշված է, իմիջի ալոց, մեր պարտիայի Բեռլինյան խորհրդակցություն բանաձևում)։ Միայն Սերբիայում և սերբերի մեջ մենք ունենք բազմամյա և «ազգային մասսաների» միլիոններն ընդդրվող ազգային-ազատագրական շարժում, որի «չարունակություն» է հանդիսանում Սերբիայի պատերազմն Ալստրիայի դեմ։ Թող այդ պատերազմը մեկուսացած լինեք, այսինքն, կապված չլինեք համաեվրոպական պատերազմի հետ, Անգլիայի, Ռուսաստանի և այլոց չահախնդրա-

¹ Լենին, Երկեր, Հ. XVIII, էջ 243։

կան և թալանչիական նպատակները հետ, այն ժամանակ բոլոր սոցիալիստները պարտավոր կլինեին հաջողություն ցանկանալ սերբական բուրժուազիային—դա միակ ճիշտ և բացարձակապես անհրաժեշտ հետևությունն է ազգային մոմենտից ներկա պատերազմում: Բայց սոֆիստ Կաուցկին, որ այժմ ծառայության մեջ է գտնվում ավստրիական բուրժուաների, կղերականների և դեմոկրատների մոտ, հենց այս հետևությունն է, որ չի անում:

Այնուհետև: Մարքսի դիալեկտիկան, լինելով դիտական-էվոլյուցիոն մեթոդի վերջին խոսքը՝ արդելում է հենց մեկուսացած, այսինքն, առարկայի միակողմանի և այլանդակորեն խեղաթյուրված քննարկումը: Սերբ-ավստրիական պատերազմի ազգային մոմենտը համակլրողական պատերազմում ոչ մի լուրջ նշանակություն չունի և չի էլ կարող ունենալ¹:

Լենինը, որպես դիալեկտիկ, բոլորովին այլ կերպ էր մոտենում պատերազմի անալիզին, քան Կաուցկին: Ուսումնասիրելով համաշխարհային պատերազմի բնույթը, նա լուրջ նշանակություն չի տալիս Սերբիայի կողմին, որովհետև նա տեղի է ունենում ոչ առանձնացած, այլ կապված է Անգլիայի, Ռուսաստանի շահախնդրական նպատակների հետ, համակլրողական պատերազմի հետ:

«Այս ամենը հանրաժանութ է, և այս ամենն անխղճորեն խեղաթյուրել է Կաուցկին օպորտունիստներին արդարացնելու համար: «Ձուտ» երևույթներ ոչ բնության, ոչ էլ հասարակության մեջ չկան և չեն էլ կարող լինել—այս մասին սովորեցնում է հենց Մարքսի դիալեկտիկան, որ ցույց է տալիս մեզ, որ անաղարտության բուն հասկացողությունը բոլոր նեղմտություն է, մարդկային իմացության միակողմանիություն, իմացության, որ չի ընդգրկում առարկան մինչև վերջը նրա ամբողջ բարդությունը: Աշխարհում չկա և չի էլ կարող լինել «զուտ» կապիտալիզմ, այլ կան միշտ խառնուրդներ մերթ ֆեոդալիզմի, մերթ մեչախություն,

¹ Լենին, Երկեր, հ. XVIII, էջ 262:

մերթ էլի մի ինչ—որ բանի»¹։ Արդի կապիտալիստական հասարակութեան մեջ կարող են լինել այս կամ այն խառնուրդները, հին հարաբերությունների մնացորդները և մնացուկները, բայց վճռողական կապերը նրան դարձնում են կապիտալիստական հասարակութուն, և ոչ թե և՛ կապիտալիստական, և՛ ֆեոդալական և այլն։ «...Ուստի հիշել այն մասին, թե պատերազմը ոչ «դուռ» իմպերիալիստական է, երբ խոսքն այն մասին է, որ իմպերիալիստները ազադակող կերպով խաբում են, «Ժողովրդական մասսաներին» հայտնապես քողարկում են մերկ կողոպուտի նպատակները «ազգային» ֆրաղեղողությամբ, —նշանակում է լինել անսահման բուրժուազանս կամ նենգազոր՝ ու խաբեբա... Անկասկած, իրականութեան անսահման բազմազան է, դա՛ սուրբ ճշմարտություն է։ Բայց նույնպես անկասկած է, որ այս անսահման բազմազանութեան մեջ կա երկու գլխավոր և արմատական չիթ՝ պատերազմի օբյեկտիվ բովանդակությունը իմպերիալիզմի «քաղաքականութեան շարունակությունն» է...»²։

Լենինը 1914 թվի պատերազմի կոնկրետ հարցով փայլուն կերպով ցույց է տալիս, որ դիալեկտիկական ուսմունքը կապի և փոխադարձ կախման մասին եհում է իրականութեան վճռողական, գլխավոր, հիմնական չիթերը, երեւոյթների հիմնական կապերը և հարաբերությունները հետադրուելու և ճանաչելու անհրաժեշտությունից։ Այլապես դիալեկտիկական դառնում է ամենախիսկական մետաֆիզիկա և սոֆիստիկա։

Լենինը դարձյալ մի օրինակով ցույց է տալիս երեւոյթների կապի և փոխադարձ կախման վերաբերյալ դիալեկտիկական ուսմունքի այս արտակարգ կարեւոր մոմենտը։ Ես նկատի ունեմ Լենինի՝ «Սոցիալիզմի դարձյալ մի ոչնչացում» հոդվածը։ Այդ հոդվածն ուղղված էր Ստրուվեի դեմ։ Ստրուվեն իր տնտեսագիտական աշխատություններում հանդես էր գալիս Մարքսի դեմ այն ապացույցով, թե բո-

¹ Լենին, Երկեր, հ. XVIII, էջ 262—263։

² Նույն տեղում, էջ 263։

լոր օրենքները, որ հայտնադործել է Մարքսն իր «Կապիտալում»—արժեքի օրենքը, հավելյալ արժեքի օրենքը և այլն,— թե բոլոր այդ օրենքները Փանտոմներ են, միտտիկա և թե ընդհանրապես դիտության դործն է ոչ թե հայտնադործել օրենքներ, այլ էմպիրիկորեն ճանաչել առանձին փաստերը, գրանցել այդ փաստերը: Այն օրենքները, որոնք արտացոլում են իրերի էական կապերը, էական հարաբերությունները, ըստ Ստրուվեի, մարդկային հորինվածք են, ոչ մի այդպիսի օրենք բնության մեջ գոյություն չունի:

Այս տեսակետից հետադոտողի ամբողջ ուշադրությունը պետք է դառնա էմպիրիկ նկարագրության վրա, փաստերի ուրջան կարելի է ավելի լիակատար և սպառիչ նկարագրության վրա, առանց ձգտելու նրանց ընդհանրացման և հիմնական, օրդանական կապերի ուսումնասիրման: Այս փաստում արտահայտվեց բուրժուական դիտության անգորությունը, բուրժուական դիտնականների փախուստը կապիտալիզմի օրինաչափության ճանաչումից:

«Պարոն Ստրուվեի աշխատության հարյուրամոր էջեր,— գրում է Լենինը,—նախիրված «գնի պատմական Փենոմենոլոգիայի էտյուդներին և նյութերին», իրենցից ներկայացնում են այն բանի զարմանալի հաղվադյուտ օրինակը, թե ինչպես փախուստ են տալիս դիտությունից արդի բուրժուական դիտնականները: Ի՞նչ ասես, որ այստեղ չկա: Դիտողություններ հրամանադրային և ազատ գնի մասին,—միքանի դիտողություն պոլինեզիացիներին մասին,—ցիտատներ չուկայական առևտրի կանոնադրությունից՝ հրատարակված (դիտնականությո՞ւն, դիտնականությո՞ւն) Մադագասկարի միավորելի, Անդերնամպուլինիմերին թաղավորի կողմից 178?—1810 թվականներին,—միքանի հողված բաբելական թաղավոր Համմուրաբու օրենքից (ք. ծ. —ից մոտավորապես 2100 տարի առաջվա էպոխա) օպերացիայի համար բժշկին վարձատրելու մասին,—միքանի ցիտատ, առավելապես լատինական, վերին աստիճանի դիտական ցիտատ, կնոջ առքի գնի տարիֆիկացիայի մասին դեմանական ժողովրդական օրինագրքերում,—թարգմանություն յոթը հողվածի, որ

վերաբերում են առևտրական իրավունքին, Հնդկաստանի սրբադան օրինագետներ Մանուի և Հայնավալիկիայի երկերից, — գնորդի պաշտպանությունը հռոմեական իրավունքում և այլն և այլն՝ ընդհուպ մինչև գների ոստիկանական կարգավորման հեղինիստական օրինակները հռոմում և մինչև հռոմեական ոստիկանական իրավունքի քրիստոնեականացումը կարողինգների օրենսդրության մեջ:

Կարելի է սպասել, որ պ—ն Վ. Պ. Ռյաբուշինսկին, որ հրատարակել է պ—ն Ստրուվեի աշխատությունը, կանմահացնի իր փառքը, իբրև մեկենասի և պ—ն Ստրուվեի փառքը, իբրև լուրջ դիտնականի՝ հրատարակելով դարձյալ մի երկու հարյուր հատոր էսյուդներ և նյութեր գնի պատմական մեթոդոլոգիայից, դեհ, օրինակ, բոլոր ժամանակների և ժողովուրդների շուկաների նկարագրությունը տեքստի իլյուստրացիաներով և պ—ն Ստրուվեի ծանոթագրություններով՝ պոկոտոված գերմանական ամենալավ մատենագիտական ցանկերից: Հետևողական էմպիրիզմը կհաղթանակի, իսկ քաղաքատնտեսության տարբեր «օրենքները» Փանտոմները կչքանան ինչպես ծուխ»¹:

Լենինը, ինչպես տեսնում եք, այստեղ ծաղրում է այն կապերի և հարաբերությունների մետաֆիզիկ ըմբռնումը, որոնք դոյություն ունեն առարկաների միջև, ըմբռնումը, որն իրավահավասար է դարձնում բոլոր հարաբերությունները, բոլոր կապերը և որը տանում է դեպի մաքուր էմպիրիզմը, դեպի փախուստ իրականության մեջ ամեն մի էականի, արմատականի, վճռողականի իմացությունից:

Ահա սա անհրաժեշտ է հաշվի առնել, երբ խոսքը առարկաների կապի մասին է, որովհետև օրգանական և արտաքին կապերի միջև տարբերություններ տեսնելու մարքսիստական դիալեկտիկական մեթոդի պահանջը հանդիսանում է դիալեկտիկական ուսմունքի անկապտելի տարրը: Առանց սյդ տարրի չի կարելի ճշտությամբ ըմբռնել մատերիալիստական դիալեկտիկան:

Երևույթների կապի և փոխադարձ կախման դիալեկտի-

¹ Լենին, երկեր, 4. XVII, էջ 277—278:

կական օրենքը հասկայական նշանակութիւն ունի իմացութեան գիտական թեորիայի համար: Լենինը սովորեցնում է, որ չկա իմացութեան թեորիայի առանձին գիտութիւն գիտելիւթիկայից անշատ: Դիալեկտիկան հենց իմացութեան գիտութիւնն է, այսինքն, այլ կերպ ասած՝ իրականութիւնը ճշտութեամբ ճանաչել կարելի է միայն ճանաչելով նրան դիալեկտիկորեն, հաշիւ առնելով փոխհարաբերութիւններ, կապերի, փոխադրեցութեան այն ամբողջ բարդութիւնը, որ կան բնութեան մեջ: Սուբյեկտիվ դիալեկտիկան, իմացութեան դիալեկտիկան պետք է հիմնովի օրյեկտիվ դիալեկտիկայի վրա, որ գոյութիւն ունի բուն իսկ իրականութեան մեջ:

Իրականութիւնը ճշտութեամբ ճանաչելու համար, այս կամ այն երևույթը ճշտութեամբ ճանաչելու համար դիալեկտիկական ճշմարտութիւնը պետք է արտացոլի երևույթների բոլոր վճռողական կողմերի միակցութիւնը: Լենինն ասում էր. «Երևույթի, իրականութեան և նրանց (փոխ) հարաբերութեան բոլոր կողմերի միակցութեան—ասէ թե ինչից է գոյանում ճշմարտութիւնը»: Այս հետեւութիւնն իմացութեան թեորիայի համար բղխում է երևույթների կապի և փոխադարձ կախման դիալեկտիկական ուսմունքից: Եթե ամեն ինչ կապված է միմյանց հետ, ամեն ինչ գտնվում է փոխադրեցութեան պրոցեսում, ապա այստեղից հետևում է, որ ճշմարտութիւնն այն է միայն, ինչն արտացոլում է առարկայի բոլոր վճռողական կապերի և հարաբերութիւնների գումարը: Դուրս նետեք այդ գումարից որևէ էական մոմենտ, և ճշմարտութիւնը կստացվի միակողմանի, այլանդակ, խեղաթյուրված: Միայն նկատի ունենալով երևույթների, առարկաների բոլոր էական կապերը՝ կարելի է համարել, որ ճանաչված է օրյեկտիվ ճշմարտութիւնը:

Կարելի է բերել շատ օրինակներ, թե ինչպէս Լենինն ու Ստալինը, ելնելով իմացութեան այս դիալեկտիկական կրթտերիւմից, վճռում էին բանվոր դասակարգի դասակարգային պայքարի ստրատեգիայի և տակտիկայի բարդագույն հարցերը:

Հիշեցեք, օրինակ, լենինյան ուսմունքը ուսուցիչին սի-
տուացիայի մասին: Լենինը ցույց տվեց վճռողական այն
կողմերի միակցությունը, որոնցից կաղմվում է ուսուցիչին
սիտուացիան: Նա գրում էր, որ մի շարք պայմանների առ-
կայությունն է միայն, որ ուսուցիչին սիտուացիան դարձ-
նում է ուսուցիչ: Ուսուցիչին սիտուացիայի համար
պետք է հաստատվի այնպիսի դրություն, երբ վերնախա-
վերն արդեն չեն կարող ապրել այնպես, ինչպես նրանք ապ-
րում էին մինչև այժմ: Բայց հարկավոր է, որ ներքնախա-
վերն էլ չողենան ապրել այնպես, ինչպես նրանք առաջ էին
ապրում: Որպեսզի ուսուցիչին սիտուացիան պրակտիկորեն
իրացվի, նույնպես անհրաժեշտ է այնպիսի պայման, ինչպես
պարտիայի, բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի կառքն
է, ուժը, ընդունակությունը՝ օգտագործելու այդ սիտուա-
ցիան, բանվոր դասակարգը վճռական դրոհի համար կաղ-
մակերպելու ընդունակություն:

Կամ հիշեցեք ընկեր Ստալինի ուսմունքը կոլեկտիվաց-
ման մասին: Ընկեր Ստալինը ցույց տվեց, թե ինչպիսի
պայմաններ պետք էր ունենալ համատարած կոլեկտիվացման
անցնելու, համատարած կոլեկտիվացման լողունդն առաջա-
դրելու համար: Նա անվանում է այնպիսի պայման-
ներ, ինչպես երկրի ինդուստրացումը, ինչպես ֆինան-
սական մեծ միջոցների առկայությունը: Ընկեր Ստա-
լինն ասում էր, որ բավական չէ, որ պարտիայի վերնա-
խավը դիտակցի և հասկանա կոլեկտիվացման անհրաժեշ-
տությունը, հարկավոր է, որպեսզի ամբողջ պարտիան հա-
մակվի այդ անհրաժեշտության դիտակցությամբ: Բավա-
կան չէ սակայն նաև այդ, — հարկավոր է նաև, որպեսզի
դյուրացիական մասնաներն էլ դիտակցեն սոցիալիստական
կոլեկտիվացման ուղիներին անցնելու անհրաժեշտությունը:
Նվ այս պայմանների միակցության առկայությունն է մի-
այն՝ հիմունք ստեղծում համատարած կոլեկտիվացման հա-
մար: Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ առաջ համատարած
կոլեկտիվացման համար չկային բոլոր անհրաժեշտ պայման-
ները, որ միայն 1929 թվականի վերջերին նրանք ստեղծվե-

ցին, և միայն այն ժամանակ պարտիան կարողացավ առաջադրել զյուզատնտեսության համատարած կոլեկտիվացման լոզունգը:

Այսպիսով, զխտական ճշմարտություն կարելի է համարել միայն այն ճշմարտությունը, որը կազմավորվում է իրականության ամենից ավելի կարևոր, վճռողական մոմենտները, կողմերի միակցության ճանաչողությունից:

Կապի և փոխադարձ կախման յերաբերյալ դիալեկտիկայի ուսմունքից բխում է իրականությանը պատմական մոտեցում ունենալու, երևույթների պատմական անալիզի պահանջը: Եթե չի կարելի դիտել ամեն մի երևույթ մեկուսացած մյուս երևույթներից, եթե նրանք դառնում են սերտ կապի և փոխադարձ կախման մեջ միմյանց հետ, ապա, հետևապես, յուրաքանչյուր երևույթ կարելի է հասկանալ միայն կապակցելով այն պատմական պայմաններին հետ, որոնց մեջ այդ երևույթը դոյություն ուներ կամ դոյություն ունի, այսինքն, ամեն մի երևույթի պետք է մոտենալ պատմական տեսակետից, այն պատմական պայմանների տեսակետից, որոնք նրան կյանքի են կոչել: Այս պահանջի անտեսումը հետազոտողին, պրակտիկ դործչին դատապարտում է զարգացող իրականությունը սխալ հասկանալու: «Համկ(ր)Պ պատմության համառոտ դասընթացի» մեջ խոսվում է այն մասին, թե բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի լոզունգը մեր ներկա պայմաններում հակա-ռևոլուցիոն լոզունգ է, որովհետև բուրժուական ռեսպուբլիկան սովետական տեսլուրդիկայի համեմատությամբ մի քայլ է դեպի հետ: Իսկ 1905 թվականին մեր երկրում այնպիսի իրադրություն էր, որն անխուսափելիորեն ծնում էր հենց բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիա: Հետևապես, ամեն ինչ կախված է պատմական պայմաններից, տեղից և ժամանակից:

Ի՞նչ նշանակություն ունի պատմականության տեսակետը բանվոր դասակարգի և նրա պարտիայի պայքարի տակ-

տիկան ճիշտ, գիտականորեն որոշելու համար:

Նրա նշանակությունն այն է, որ տակտիկայի, տակ-

տիկական լողունդները որոշմանը պետք է միշտ մոտենալ պատմականորեն: Պատմական որոշ պայմաններն առաջադրում են տակտիկայի որոշ ձևեր, պատմական այլ պայմաններ առաջադրում են ուրիշ ձևեր: Լինում են մոմենտներ, երբ ամենից կարևորն աստիճանական, էվոլյուցիոն աշխատանքն է՝ աշխատանքը ուժերի քանակական կուտակման համար, և լինում են այնպիսի մոմենտներ, երբ ուժերը բավականաչափ կուտակված են և անհրաժեշտ է անցնել գոյություն ունեցող կարգի պայթեցման, գոյություն ունեցող հարաբերությունների արմատական փոփոխման: Լենինն ու Ստալինը բանվոր դասակարգի պայքարի ստրատեգիայի և տակտիկայի հարցերում այսպիսի դիալեկտիկական ճկունություն ունենալու չափ օրինակներ են տվել, ճկունություն, որը որոշվում էր կոնկրետ պայմանների պատմական հասկացումով: Կրեմլմ մեկ օրինակ միայն: Լենինը այսպիսի դիալեկտիկական ճկունության և պատմական մոտեցում ունենալու օրինակ է ցույց տալիս դեպի բանվոր դասակարգի տակտիկայի որոշումը քաղաքական իշխանություն նվաճելու համար բուրժուազիայի դեմ մղած նրա պայքարում:

Լենինը գրում էր: «Այսօր առկա է ռեվոլյուցիոն սիտուացիա, չկան պայմաններ մասսաների խմորման համար, նրանց ակտիվության բարձրացման համար, այսօր ձեռքդ տալիս են ընտրական բյուլլետեն—վերցրու այն, կարողացիր կազմակերպվել նրա համար, որպեսզի նրանով հարվածես թշնամիներին, և ոչ թե նրա համար, որ պառլամենտի տաքուկ տեղերն անցկացնես այնպիսի մարդկանց, որոնք կառչում են բաղկաթոռն ընտրի վախից: Վաղը քեզից խլեցին ընտրական բյուլլետենը, ձեռքդ տվին հրացան և հոյակապ, մեքենային տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված արագաձիգ թնդանով, — առ մահվան և կործանման այս ղենքերը, մի՛ լսիր սանտիմենտալ նվացողներին, որոնք վախենում են պատերազմից. աշխարհում դեռ չափազանց չափ է մնացել այնպիսի բան, որ պետք է ոչնչացվի կրակով և երկաթով՝ բանվոր դասակարգի ազատագրման համար, և, եթե մասսաների մեջ աճում է դայրություն և հուսահատու-

թյունը, եթե առկա է սեռը ընդհանուր սխառնացիան, պատրաստվիր ստեղծելու նոր կազմակերպություններ և գործի դնելու մահվան և կործանման այնքան օգտակար անոթներ քո կառավարություն և քո բուրժուազիայի դեմ»¹։

Լենինյան այս խոսքերը հիանալի պատկերավորում են դիալեկտիկական պատմականությունը, որը բղխում է երևալույթների ընդհանուր կապի ընդունումից։

Ահա համառոտակի այն հիմնական դրույթները, որոնք բնորոշում են մատերիալիստական դիալեկտիկայի առաջին ուղիղադիմը կամ օրենքը—իրականության երևույթների կապի և փոխադարձ կախման օրենքը։

Եթե համառոտակի ամփոփենք այս օրենքի առթիվ առվածը, ապա մենք պետք է եզրակացնենք, որ այն, առաջինը, հնարավորություն է տալիս ճանաչելու իրականության օբյեկտիվ օրինաչափ բնույթը։ Ի հակակշիռ մետաֆիզիկայի, որ զտնում է, թե իրականության մեջ տիրապետում է պատահականությունը, դիալեկտիկան ցույց է տալիս օբյեկտիվ օրենքների առկայությունը, որոնք բնական անհրաժեշտությամբ պայմանավորում են այս կամ այն երևույթների զոյությունը, օրինակ, այս կամ այն հասարակական Փոփոխության զոյությունը պատմության մեջ, նրա դարդացման ուղղությունը և բնույթը։

Դիալեկտիկան, երկրորդ, ի հակակշիռ մետաֆիզիկ մեթոդի, որ չի գնում երևույթների մակերևույթից այն կողմ, թույլ է տալիս տեսնելու էական, օրգանական կապերը և պահպանում է վճռողական, կարևորագույն կապերը երկրորդականներով, մասնավորներով նենգափոխելուց, դիտությունը բարձրացնում է երևույթների խոր թերթիական ընդհանրացման աստիճանի վրա։

Կապի և փոխադարձ կախման դիալեկտիկական ուսմունքը նշանակում է, երրորդ, որ, ճանաչելով երևույթների և առարկաների վճռողական, օրգանական կապերը, մենք հնարավորություն ունենք նախատեսելու իրադարձությունների

¹ Լենին, Երկեր, հ. XVIII, էջ 276։

ընթացքը, հետամուտ լինելու հասարակության շարժմանը
ոչ միայն ներկայումս, այլև ապագայում:

Ձորրորդ, կապի և փոխադարձ կախման օրենքը պահան-
ջում է առարկայի էական կողմերի մաքուր միակցության
հաշվառում և ցույց է տալիս, որ միայն այսպիսի հաշվա-
ռումն է օբյեկտիվ ճշմարտության իմացության պայման
հանդիսանում:

Եվ, վերջապես, հինգերորդ, այս օրենքի էությունն այն
է, որ նա որոշում է պատմական տեսակետն իրերի նկատ-
մամբ և ցույց է տալիս, որ դեպի իրականությունը միակ
ճիշտ մոտեցումը միայն պատմական մոտեցումն է:



Նմբագիր Բ. Ն. Դավթյան

Պատվեր № 373, заказ № 373 տիրած 4000, тираж 4000

թ/և տպ. մամուլ, 1,88 հեղինակային մամուլ (31.680 տպ.

նիշ 1 տպ. մամուլում)

Հանձնվել է արտադրության 21/XII 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 25/I 1941 թ.

Գինը 70 Լ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան
Երևան, Ալլախանյան № 65

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65

վ.Յ. 1000

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0023529

85

ЦЕНА

9162 70 4

5206

М. РОЗЕНТАЛЬ

ВСЕОБЩАЯ СВЯЗЬ
И ВЗАИМОЗАВИСИМОСТЬ ЯВЛЕНИЙ
В ПРИРОДЕ И ОБЩЕСТВЕ

Государственное издательство политической литературы
Москва 1955